Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/25>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար Մայիսյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր 03 սեպտեմբեր 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
Անդամներ՝ Վ.Հայրապետյան /ԲԱ /
Լ.Խաչատրյան /ԲԱ/
Ն.Խաչատրյան /ԳԱ/
քարտուղար՝ Ա.Ավետիսյան
<<ԷՆ ՇԻՆ>> ՍՊԸ լ/ա Լ.Հակոբյան
<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ տնօրեն Է.Բաղդասարյան

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/25>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Գ.Հայրապետյանը և հանձնաժողովի անդամ Ա.Մեսրոպյանը գտնվում են հերթական արձակուրդում:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով /գտնվում է հերթական արձակուրդում/ նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը:

1. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ **ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/25** ծածկագրով ԳՀ ընթացակարգի միաժամանկյա բանակցություններին սահմանված ժամկետում ներկայացել են <<ԷՆ ՇԻՆ>> ՍՊԸ լ/ա Լ.Հակոբյանը և **<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ տնօրեն Է.Բաղդասարյանը:**

Բանակցությունների արդյունքում **<<ԷՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ի** կողմից առաջարկվեց 31404100 /երեսունմեկ միլիոն չորս հարյուր չորս հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ, **<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ-ի կողմից առաջարկվեց՝ 31374100 /երեսունմեկ միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր/ՀՀ դրամ:**

2. <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/25>> ծածկագրով ը նթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/25>>** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ** -ն՝ որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ <<ԷՆ ՇԻՆ>> ՍՊԸ -ն:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ *03.09.2019թ.* հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Հանձնաժողովի նիստին մասնակցող անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Անդամներ՝ Ն.Խաչատրյան	
Լ.Խաչատրյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	
<<ԷՆ ՇԻՆ>> ՍՊԸ լ/ա Լ.Հակոբյան	
<<Հրազդանի ՃՇՇՁ>> ԲԲԸ տնօրեն Է.Բաղդասարյան	